



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 12 » _____ 10 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/-446

Հոկտեմբերի 5-ից հոկտեմբերի 11-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Հոկտեմբերի 5-6-ին՝ գրեթե ողջ հանրապետությունում, հոկտեմբերի 7-8-ին՝
տեղ-տեղ դիտվել են տեղումներ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների
եղանակ: Տեղումների գումարային առավելագույն քանակը գրանցվել է Կապանում՝
46մմ, Սևանում՝ 42մմ, Պուշկինի լ/ք-ում՝ 41մմ, Գորիսում՝ 39մմ, Սեմյոնովկայում՝ 33մմ,
Գավառում՝ 32մմ, Ստեփանավանում՝ 30մմ, Վանաձորում՝ 29մմ, Անանուն լ/ք-ում՝ 25մմ,
մնացած շրջաններում՝ մինչև 23մմ քանակությամբ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը հոկտեմբերի 5-ին, 8-10-ին եղել է նորմայից
ցածր 1-2 աստիճանով, հոկտեմբերի 6-7-ին՝ 2-3 աստիճանով, հոկտեմբերի 11-ին՝
նորմայի սահմաններում՝ բացասական շեղումով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հոկտեմբերի 11-ին. Արարատյան
դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքի հովիտներում
դիտվել է $+20...+24^{\circ}\text{C}$, Տավուշում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի,
Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ $+15...+20$
(Բազրատաշենում՝ $+21^{\circ}\text{C}$, Ամբերդում՝ $+14^{\circ}\text{C}$) աստիճան:

Ամենացածր ջերմաստիճանը շաբաթվա ընթացքում գրանցվել է հոկտեմբերի
11-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում,
Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ $-2...+3^{\circ}\text{C}$ (Աշոցքում՝ -6°C , Ապարանում՝ -4°C ,
Մարտունիում՝ -3°C , Վանաձորում և Ամբերդում՝ $+4^{\circ}\text{C}$, Օծունում՝ $+5^{\circ}\text{C}$), Տավուշում,
Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում,
Սյունիքի հովիտներում՝ $+3^{\circ}\text{C}...+8^{\circ}\text{C}$:

Հոկտեմբերի 6-ին Սևանում դիտվել է ուժեղ անձրև՝ 30.8մմ/12ժամում:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում դիտվել է փոփոխական
ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝
1900.63 մ (11.10.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 7 սմ-ով:

Հարգանքով՝
Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան